



ՄԻՋԱՂԳԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԻԵՎՈՒՄ

Հունիսի 9-ից 11-ը ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանն Ուկրաինայի Հանրապետության մայրաքաղաք Կիևում մասնակցեց <<IDEAS ներառական որոշումներ հավասար և հաշվետու հասարակության համար>> միջազգային կոնֆերանսին, որը ֆինանսավորում է Եվրոպական միությունը և իրականացնում է Բրիտանական խորհուրդը: Կոնֆերանսի նպատակն էր ծանոթացնել մասնակիցներին պատասխանատու և իրավահավասար քաղաքացիական հասարակության ձևավորման առանձնահատուկ ուղիներին և մեթոդներին, խթանել քաղաքացիական հասարակության դերն ու կարողությունները՝ տեղական ինքնակառավարման մարմինների հետ որոշումներ ընդունելու, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների պաշտպանության մոնիտորինգ իրականացնելու գործընթացում արդյունավետ աշխատելու համար: Կոնֆերանսին ներկա էին 54 մասնակիցներ Հայաստանից, Ադրբեջանից, Վրաստանից, Հորդանանից, Լիբանանից և Ուկրաինայից:

Քննարկվեցին նշված երկրներում իրավահավասար քաղաքացիական հասարակության կերտման պիլոտային ծրագրերի իրականացումն ու դրանց ընթացքը, նշված հասարակություններին բնորոշ ընդհանրություններն ու առանձնահատկությունները ու հաշմանդամություն ունեցողների խնդիրները: